ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 155 – Ա

05 մարտի 2019 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված <<Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգ>>-ի 67-րդ կետը

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Ներքին Գետաշենի բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2019 թվականի մարտի 1-ին անցկացված մրցույթի մասնակից Աշոտ Մերուժանի Անտոնյանի՝ իր արդյունքների մասով, բողոքի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Ղոնյան Քնար-	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ
Գաբրիելյան Կարինե -	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հանրային առողջության բաժնի գլխավոր մասնագետ
Պողոսյան Անուշ	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Բուդումյան Խաչատուր	-Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

2. Հանձնաժողովին՝ բողոքի վերաբերյալ եզրակացությունը 5-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքիմարզպետին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ